№ 20. Մայիսի 25. — 1872 — Մայիսի 25. № 20.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (Սրբոյ Նշան տուն) և Իվանովի ընթերցարանումը։

ՄՇԱԿ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տալել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւնները տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երիտասարդներին խրատ։—Ներքին տեսութիւն։ Մի առաջարկութիւն։ Նկրքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Ֆելիէտօն։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԽՐԱՏ՝

Ինչպէս ամեն տարի թէ դիմնաղիօններում և թէ զանազան ուսումնարաններում ուսում աւարտած երիտասարդները պիտի և այս տարի թողնեն իրանց հայրենիքը ու գընան հեռու երկիրները, իրանց ուսումը կատարելագործելու, կամ աւելի լաւ ասեմ վկայագիրը ստանալու նպատակով։ Իմ դիտաւորութիւննէ ճանապարհ ընկնող նորահաս հայրենակիցներին մէկ երկու խօսք ասել,—եթէ նոքա առհասարակ կարդումեն տպած յօդվածը ..։

×

Եթէ դուք, սիրելի երիտասարդներ, ուսում առնելուց յետոյ դիտաւորութիւն չունէք վերադառնալ ձեր հայրենիքը,—ես գործ չունիմ ձեզ հետ...ասումեմ գործ չունեմ ձեզ հետ, որովհետև այդ դէպքումը հասարակութեանը փոյթ չէ դուք ինչ ուղղութիւն էք ընտրելու։ Բայց եթէ ձեր նպատակն է վերադառնալ հայրենիքը, դուք պարտաւոր էք այն ուղղութեանը հետևելու որը պահանջումէ ձեզանից հասարակական կարծիքը, որը յարմար է մեր հասարակական կեանքի պահանջմունքին...։

×

Ի՞նչ է պահանջում ձեզանից հասարակութիւնը։

Նախ քան յայտնեմ ձեզ մանրամասնաբար այն, ինչ որ պահանջումէ ձեզանից հասարակութիւնը, ես կամենումեմ կարճարօտ ձևակերպել ձեզ մեր հասարակութեան պատկերը։

×

Եթէ դուք հասարակութեան ստորին կամ միջին դասին էք պատկանում, ձեր հայրը ձեզ ճանապարհ դցելով ասումէ ձեզ, «գնայլաւ ուսում առ, աշխատիր, ատեստատ ստացիր, որ մարդ դառնաս, որ երբ կ'վերադառնաս պատիւ ունենաս մարդիկների մէջ։»—Եթէ դուք հասարակութեան բարձր դասին էք պատկանում ձեր հայրը ձեզ միևնոյնը ասելով, կարելի է փոքր ինչ աւելի ծաղկած ոճով, աւելացնում է մէկ երկու խօսք հասարակութեան մէջ նշանակութեանը հասնելու պարտաւորութեան մասին։

×

Եթէ դուք կամենում էք հետևել միայն այդ խրատին, ես իմ կողմից հրաժարվում եմ իմ կարծիքս յայտնելու, ձեր հասարակական պարտաւորութիւնների մասին...։ Ես այդ ծնողական խրատի վրա ոչինչ աւելացնելու չունիմ...։

Բայց եթէ կամենաք ինձ մի քանի րոպէ ձեր ուշադրութիւնը շնորհելու,—ահա ինչ տեսակ խրատ կ'տամ ձեզ։

×

Երբ կ'մտնէք համալսարանը, դուք անշուշտ կ'պատահէք այնտեղ զանազան խմբերին,—թէ աշխատասէր, թէ ծոյլ ու անգործ ուսանողներից։ Աշխատեցէք ծանօթանալ այդ վերջիններին հետ և նոցա հասարակութիւնը մտնել։ Հարկաւոր չէ ամենևին դիտութեամբ պարապելու,—միայն պէտք է քննութենից առաջ վերջին երկու ամիսը դասերդ սերտել,—և հիանալի կերպով հարցաքննութիւն կը տաք։

Զ'մոռանաք ուրախ կերպով անցնել ժամանակը։ Դուք ձեր խղճմտանքի առաջն էլ արդար կ'մնաք, նամանաւանդ, որ վկայագիրը ստանալով դուք կատարելապէս բաւականացնումէք ձեր ծնողներին։

Վկայագիրը ստանալուց յետոյ, դուք կարողէք միշտ յուսալ, որ հեշտութեամբ կը հասնէք նշանակութեանը հասարակութեան մէջ։

×

Աշխատեցէք ձեր ուսանողութեան ժամանակ, որքան կարելի է, ձեզ հեռու պահել օտար շրջանից, որովհեաև կարող էք այնտեղ նոր մտքերին ծանօթանալ, և ստիպված կը լինէք ձեր հնացած սովորութիւնները և ընտանիքից հետ բերած հրեշաւոր նախապաշարմունքով լի ուղղութիւնը փոխելու...։ Աշխատեցէք ձեր հայրենակիցների նեղ, սահմանափակված շրջանից չ'դուրս գալ, որտեղ միշտ անշարժ մնալով, դուք հաւատի կարող էք լինել, թէ նոր միտք չէք լսելու, ուրեմն ձեր ուսանողութեան ժամանակ այդ շրջանը միայն յաճախելով դուք այն մխիթարութիւն կունենաք, որ հայրենիքը վերադառնալով, դուք ձեզ հետ կրկին կ'բերէք մի և նոյն նախապաշարմունքը, մի և նոյն պակասութիւնները մի և նոյն կրքերը, դէպի խարդախութիւնները (ինտրիգաներ) մի և նոյն հակումն, դէպի առաջադիմութիւն և ամէն բարի սկզբունք մի և նոյն տակութիւն...։

×

Մտածեցէք զլխաւորապէս ձեր նիւթական ապահովութեան մասին, դատարկախօս համարելով նոցա, որոնք հաւատացնումեն ձեզ թէ իւրաքանչիւր մարդ իր սուրբ (հասարակական) պարտաւորութիւն պիտի համարէ մարդկութեան համար ինչ և իցէ արդիւնաբերելու, ապագայ սերունդներին որ և իցէ յիշատակ թողնելու...։

×

Ձեր հայրենիքը վերադառնալուց յետոյ, աշխատեցէք հեռու պահել ձեզ ձեր հայրենակիցներից և նոցա հետ միասին ոչինչ գործ չ'բռնէք։

Բայց եթէ անպատճառ կ'կամենաք նոցա հետ գործ բռնել, կամ պատահմամբ կ'կապվէք նոցա հետ մի որ և է ընդհանուր գործի պատճառով,—կամ ընտանեկան հանգամանքները ձեզ կ'ստիպեն մերերի հետ անմիջական յարաբերութիւնների մէջ լինել...այն ժամանակ վճռողական քայլ անելուց առաջ լաւ քննեցէք նոցա բնաւորութիւնը։

×

Ակսենք հիներից։

Մեր հին սերունդը անսխալական է, ուստի կատարեալ իրաւունք ունի ինքնասած, ինքնահաւան, անձնապաշտ լինել...։ Մարդը միայն այն ժամանակ օգտաւէտ կարող է լինել մարդկային հասարակութեանը, երբ նա այնքան ծերացել է, երբ նորա ուղեղը սարերների պատճառով այլ ևս ընդունակ չէ ֆիզիօլոգիական կերպարանափոխմանը, այժ չունի մի նոր միտք ըմբռնելու, մի նոր, անսովոր գործողութեանը ենթարկվելու։ Այդ է նշանակում կեանքի փորձը։

×

Կամենումէք այժմ ծանօթանալ այն տեսութեան (տէօրիայի) հետ, որը մշակել է իրան հին սերունդը իր կենսական փորձի օգնութեամբ։

Ահա բառ առբառ նոցա տեսութիւնը։ „Ամեն հայր խելօք է իր որդուց, եթէ մինչև անգամ հայրը ոգէտ լինէր, իսկ որդին գիտնական ու աշխատասէր։ Ուրեմն 'իզուր է գիտութեանը ծանօթանալ, 'ի զուր է աշխատել,—որովհետև ինչքան և աշխատէք, ինչքան և թափէք ձեր ձիգն մտաւորապէս զարգանալու,—դուք դարձեալ ոչ թէ մ'յոյն ձեր հօրից խելօք կարող չէք լինել, բայց և նորան հաւասար չէք կարող լինել,—միայն այն պատճառով, որ նա ձեր հայրը է իսկ դուք նորա որդի։ Որանից դուրս բերենք լոգիկաբար հետևանքը։ Հայրը միշտ խելօք կ'լինի իր որդուց. դուք ձեր կողմից երբ երեխաներ կունենաք, նոցանից խելօք կ'լինիք, ձեր երեխաները իրանց զաւակներին կ'գերազանցեն մտաւոր զարգացման մէջ,—այնպէս որ քանի մի սերունդներից

ները գործ դրեցին իւրեանց վերջին ճիգը և քուչէքում երգելով ման էին ածում լազարէ։ Այդ փորձը անցաւ ապարդիւն։ Ուրեմն ինչ պիտի արած երկնքի հետ հաշտուելու համար։

Անցեալ տարի Թէհրանի Մուշտայիդը նախադուշակեց Պարսկաստանի երաշտութեան պատճառը։ Նա արգելեց Հայերին ամպած օրերում տանից դուրս գալ, որովհետև անձրևային կաթիլները նոցա վերայ ընկնելով պղծվումէին. և երկինքը դարշումէր ցօղել իր խոնաւութիւնը։

Բայց ինչ է Թիֆլիսում անձրև չը գալու պատճառը։—Ինձ թւում է, Թէհրանու Մուշտայիդի մարգարէական հոգին աղդումէ ինձանում մի նախադուշակութիւն ես կարծումեմ, որ ամպերը մեր քաղաքի հօրիզոնում, մի չար նախանձից դրդուելով, խռովել, են։ Նոքա տեսանելով, որ աղջիկների իւփկէքը, շէյֆները և նոցա ուռած զգեստա—դմակները աւելի շատ են փքվում քան թէ իւրանք, չարանումեն, և անձրև չեն տալիս։

Մենք խորհուրդ կը տայինք աղջիկներին, գոնեա, ամպած օրերում տանից դուրս չը գալ, եթէ նոքա չը կամէին սովից կոտորել աղքատներին . . .

3

Կարծումեմք հրաշքների դարը անցաւ այն, միայն լուսաւոր երկրներում։ Բայց տակաւին Խամայելի աշխարհի բնաղաւառում, յայտնութիւններ լինումեն Մէքքայի քաղաքում արաբացի Շեյխ—Մուհամմէտ—Սադիկը. Քաբայի տան մէջ աղօթելու ժամանակ, յանկարծ 'գերեզմանից յայտնվումէ Մուհամմէտը իր երկար մօրուքով, և ստիպակ չալմայով։ Մարգարէն ասումէ Իսլամի կրօնաւորին, որ իւր հետևողների մէջ սովի ժանտախտի խօլերայի պատճառն, այս քանի տարիներում եղան նոցա յանցանքները, և, հրաւիրումէ նորանց ղղջալ, ապաշխարել, մինչև կանցանէր Աստուծոյ բարկութիւնը։

Շեյխը դուրս գալով մզկիթից այդ յայտնութիւնը ահու դողով պատմումէ արաբներին։

Մեք ցաւումենք, որ Մարգարէն մոռացել է ասել մի բան, Պարսկաստանում Իսլամի հետևողների մէջ բացի մեղքը, սովի պատճառներից մինն էլ այն է, որ հարուստները, փոխանակ թոյլ տալու արտասահմանից բերուած ցորեանները ծախուին մէյդանում, իրանք թագուն դնումեն բերդներից, լցնումեն իւրեանց ամբարներում, որ կարօղանան թանդ դնով վաճառել աղքատների վերայ։

Թէ և Մարգարէն այդ մասին ոչինչ չէ յիշել, իմ կարծիքով, այդպիսի մուսուլմաններ, որք կենդրօնացնումեն իւրեանց ձեռքում ժողովրդի ապրուստի մնունդը, իսպառ կը զրկուին ճէննաթում եօթանասուն հուրի իւրեանց կին ստանալուց իրրև իսլամի մօօմին (հաւատացեալ)։

4.

Մի երիտասարդ, բերանը փրփրած, կատաղութեան արիւնը աչքերում, դէպի „Մշակի“ խմբագրատունն էր դիմում։ Նա հանդիպեց ինձ բուլվարի վերայ։

— Ուր, պարոն Սնապարձ։

Հարցնումեմ նորանից։

— Դէպի խմբագրատունը։

Պատասխանումէ երիտասարդը շարունակելով ճանապարհը։

Это ужъ черезчуръ, черезчуръ ..

Это нестерпимо ..

Ասումէր նա ինքն իրան։

— Տօ, մի կանգնիր բան ունիմ ասելու։

Ցետքից կոչումեմ ես։

Պ. Սնապարձը կանգնեց։

Ես մօտեցայ։

— Ինչ կայ։ Հարցնումեմ։

— Ես գնումեմ նորա հետ կռուելու։ Ասաց նա։

— Ում հետ։

յետոյ մարդկութիւնը բոլորովին կը բթամտանայ: *)

Գանք այժմ մեր բարձր ուսում աւարտած երիտասարդութեանը: Ճշմարիտ է, որ նոքա մեր ծերերից աւելի գիտութիւն ունին—բայց նոցա բնաւորութիւնը շատ չէ զանազանվում հին սերունդից...այդպէս հեշտ չէ դարևոր յատկութիւնները միանգամով ջնջել: Եւ ինչի՞ ջնջել...երբ հասարակութիւնը բաւական է իր նոր, առաջադէմ սերունդի մտաւոր դրութեամբ:

Մեր երիտասարդներից իւրաքանչիւրը իրան անսխալական է կարծում, ինչպէս և մեր ծերերը, միայն այն զանազանութեամբ, որ ծերը բացի իր անձից ուրիշ հեղինակութիւն չէ ճանաչում,—իսկ երիտասարդը բացի իր անձից, որ նորա համար ամենաբարձր հեղինակութիւնն է, անպայման ենթարկվում է և մի որ և է գիտական հեղինակութեանը:

×

Մենք անպատճառ հպատակումենք միակողմանի կերպով մի որ և է մտաւոր հեղինակութեանը, և չենք կարող հասնել զանազան, տարբեր գիտական կարծիքների և հասարակական գաղափարների մէջ հաւասարակշռութեան ըմբռնելուն, կամ զանազան երևոյթներից և գաղափարներից մեզ համար մշակել չենք կարող մի միջին կարծիք, որը մեր սեպհական, անհատական համոզմունք դառնար:

×

Եթէ դուք ձեր հայրենիք վերադառնալով, կ'կամենաք մեր բարձր ուսում ստացած երիտասարդութեան հետ գործ կատարել, աշխատեցէք նոցա առաջ որքան կարելի է անմատչելի երևալ, աշխատեցէք ինչպէս ասումեն փոխաբերական ոճով, նոցա աչքերին թող գցել:

Եթէ գիտութեան նշոյլ չունէք, պիտի ձեզ նոցա առաջ չափազանց գիտնական ձևացնէք,—եթէ փոքր ինչ հմտութիւն ունէք, — ձեռք վերառէք համեստութիւնից: Եթէ համեստ կ'լինէք, ձեզ անպատճառ տգէտ կ'կարծեն: Համեստութիւնը մեծ պակասութիւն է: Համեստութիւնը տգիտութեան նշանն է:

×

Աւելորդ է նուիրել ձեզ անխոնջ աշխատանքին: Բայց ցոյց տուեցէք իբր թէ անդադար աշխատումէք: Եթէ ճշմարիտ կաշխատէք,—ձեզ չեն գնահատի: Գնահատել ուրիշն ամենափոքր աշխատանքը կարող են միայն նոքա, որոնք իրանք սովորեն աշխատելու:

Բացի սորանից ճշմարիտ աշխատող ին ամեն կողմից նախանձ և ատելութիւն կ'հաւածէ...: Եւ այդ շատ բնական է, որ մարդը նախանձի ուրիշն այն յատկութիւններին, որոնց ինքն կարողութիւն չունի հասնելու...:

×

Վերջապէս եթէ ճշմարիտ կամենումէք օգուտ բերել ձեր հայրենակիցներին, աշխատեցէք նոցա համար հեռուից...այդպէս նոցա առաջ ամէն օր չերևալով, դուք նոցա աչքերումը աւելի նշանակութիւն կ'ստանաք:

Իսկ ամենից շատ նոցա աչքումը նշանակութիւն կ'ստանաք, և տաղանդաւոր մարդ անգամ կ'հոչակվէք,—երբ կ'մեռնէք...:

Այսքան էի ուզում ասել...: Կարծեմ որ ոչ դուք բաւական ժամանակ ունէք ինձ լսելու,—ոչ ես եմ իմ կողմից բաւական ժամանակ ունեմ երկարաբանելու:

Ուրեմն գնաք բարով,

Բարի ճանապարհ...

*) Բացի սորանից, եթէ մենք համոզված ենք որ մենք աւելի յիմար ենք քան թէ մեր ծնողները մեր երեխաները անպատճառ մեզանից յիմար կը լինեն, նոցա երեխաները իրանց կողմից նոցանից էլ յիմար կը լինեն...և այլն,—ուրեմն մենք մթթէ չենք հասկանում որ մենք յաւիտենական ճշմարտութեան առաջ ամենածանր յանցանք ենք գործում, որ ինքներս բազմացնումենք այդ բարոյապէս և մտաւորապէս անդադար ընկնող մարդկութիւնը, որ պակվումենք և երեխաներ ենք ունենում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ.

Կարդացի ձեր „Մշակ" շաբաթաթերթի (№ 16) մէջ Ուսումնարան և նիւթական ապահովութիւն վերնագրով յօդուածը, որի մէջ խօսելով մեր ժողովրդի հասարակ դասի չքաւորութեան վերայ յառաջ էք բերում դորա պատճառը, և այդպիսի վիճակից և վաճառական դասի հարստահարող ձեռքից ազատելու համար մի ընկերութիւն կազմելու հարկաւորութիւն էք տեսնում, իսկ մեր անտեսական և հողագործական դրութիւնը բարւոքելու համար մի գիւղա-տնտեսական ընկերութիւն կազմելու խորհուրդն էք տալիս—այս մասին մտադրուեցայ մի բան որը և շտապումեմ հաղորդել խմբագրութեանդ:

Բայց որովհետև իմ ասելիքս կապ ունի նաև մեր առևտուրի հետ, ես նախ մի ընդհանուր և վեր 'ի վերոյ հայեացք ձգել եմ ուզում մեր այժմեան առևտուրի և սրանով պարապող դասի վերայ: Մեր առևտուրը կայանումէ գլխաւորապէս օտար երկիրներից—Արտասահմանից և Ռուսաստանից ամեն տեսակ պատրաստուած ապրանք բերելու և մեր երկրներից դէպի այն տեղերը համեմատաբար (ներս բերածի հետ) քիչ մասով հում ապրանք տանելու մէջ և այս երկու ճիւղերը կէդրօնացած է առաւելապէս այն դասի ձեռքում, որը ունի դրամագլուխ: Մի դաս կայ որ արուեստով է պարապում, դերձակութիւնով, կօշկակարութիւնով, դարբինութիւնով, և ուրիշ հասարակ արուեստներով և այս դասը չունենալով հաստատ դրամագլուխ ապրումէ իր աշխատանքի արդիւնաբերութիւնով. իսկ մեր ժողովրդի մեծ մասը կազմումէ հողագործը, մշակը, անասուն պահողը, անտեսական ամեն ուտելիքներ պատրաստողը, մի խօսքով այն դասը որ հասկանում ենք գիւղացի ասելով և որը նոյնպէս զուրկ լինելով դրամագլխից ապրումէ իր արդիւնաբերութիւնով: Մի դաս էլ կայ որ անմիջական յարաբերութեան դեր է խաղում այս և միւս դասերի հետ և սա է միջնորդող վաճառականը որը ունի քիչ շատ դրամագլուխ:

Վեր առնելով առաջին և վերջին դասը որ երկուքն էլ նիւթական ապահովութիւն ունին և բաղդի անյաջող բերմունքին դիմացող այժ կ'մնայ հասարակ արուեստով պարապող դասը. գիւղացիի հետ և պիտի տեսնես որ այս երկուսը հակառակ միւս երկու դասի միշտ նեղութեան և անյաջողութեան են ենթարկուած. միշտ, որովհետև չունենալով նիւթական ապահովացուցիչ այժ ստիպուած պիտի լինին տանել չքաւորութեան բեռը: Բայց մենք ասեցինք վերևը որ այդ երկու դասերը ապրումեն իրենց արդիւնաբերութիւնով ուրեմն ինչպէս կարելի է որ չքաւորութեան մէջ լինեն, այս կէտը պարզուելու կարօտ է, և մեր գործը պիտի լինի այստեղ իմանալ թէ այդ արդիւնաբերութիւնը ապահովումէ նրանց վիճակը թէ ոչ: Վեր առնենք օրինակ հողագործ գիւղացին և հասարակ արուեստաւորը քաղաքի մէջ.

Ահա մի գիւղացի որը ունի վարուած և ցանուած հող. նա անհամբեր սպասումէ աչքը տնկած նախախնամութեանը որ իր անդի համար յաջող օրեր տայ—յանկարծ բնութիւնը նոցա յոյսերը ոչնչացնումէ տեղատարափ հեղեղով կամ ոաստիկ ցրտով, կարկտահար անձրևով և կամ երաշտով. գիւղացին ընկնումէ դառն դրութեանը մէջ, նորա դրացի գիւղացիները միևնոյն վիճակին են ենթարկուած ուրեմն և ինչպէս իրենց նոյնպէս և նրան օգնելու անկարող. նա ստիպուած ապաւինումէ վաճառականին խընդրելով որ շահով փող տայ իրեն և իր ապագայ վարելի հողը առաջուց երաշխաւորութեան տեղ է տալիս. վաճառականը տալիս է նորան փող թումանին 15 և մինչև անգամ 20 կոպէկով և սրանով չ'բաւականանալով պահանջումէ գիւղացից որ իրեն տար առաջուց իր անդի բերքը աժան գնով, որը հարկաւ ձեռնտու էր վաճառականին և վնասաբեր հողագործին, սա ընդունումէ տեսնելով իր ներկայ չքաւորութիւնը. գալիս է յաջորդ տարին, նա վարումէ, բայց իր վարածը արդէն ծախսուածէ և եթէ դարձեալ բնութիւնը չի զլանում, նա վճարումէ իր պարտքի մի մասը և դարձեալ միւս տարուայ համար փոխ առնելու, տոկոսները տալու և իր անդի բերքը չնչին գումարով ծախելու վտանգին է ենթարկուած, ահա այսպէս մի տարուայ հարուածը խլումէ նրանից բարեկեցութիւնը և ձգումէ նորան պարտքերի տակ որոնցից դժուարութիւնով կարողանումէր ազատուիլ. ընդհակառակն ենթադրենք որ նա պարտք չունի և հնձելու մօտ անդը խօստանումէ նորան առատ արդիւնաբերութիւն. բայց նա ծախսերից ազատ չէ, նա առաջուց քան թէ կ'հնձէր պէտք է իր ընտանեաց համար գնէ ինչ որ անհրաժեշտ է, գիւղական ծախսի մասը քաշէ, հարկ տայ և այլն, և այստեղ դարձեալ ստիպուած է դժուարութիւններ կրել և որովհետև չունի գիւղական ապահովութիւն, նա հարկադրեալ պիտի վճարէ աժան այն, ինչ որ իր ապահովութիւնն է կազմում, այն է, կամ կթի կովը, կամ լծի գոմէշը և եթէ չեղաւ իր անդի բերքը:—Սրա հետևանքը այն է լինում որ նա զրկուելով շարունակ չի կարողանում արդիւնաբերել իրեն համար մի ճնայուն դրամագլուխ, որը կարող էր նորան այդպիսի ձախող դէպքերից ազատ պահել.

Միևնոյնն է պատահում հասարակ արուեստաւորի հետ քաղաքի մէջ: Սա ապահովուած չէ իր շրջանի մէջ. սա ապրումէ իր օրական աշխատութիւնով և այդ օրական աշխատանքի վարձատրութիւնը որքան էլ լաւ լինէր դարձեալ ապահովութիւն չէ, որովհետև վարձ պէտք է տայ դուքանի, տան, աշակերտի, իր և ընտանեաց մնունդ: 'Ի բաց առնելով այն կողմնակի այլ և այլ ծախսերը որոնք նա ակամայ ստիպուած է անել որովհետև քաղաքի մէջ է նստում, նա գիւղացիի վիճակին է ենթարկվում և ստիպուած է պարտքեր անել: Նրանք որ շատ կամ քիչ անգամ պատահած են լինել մեր հայաբնակ գիւղերում և քաղաքներում էլ պատահած են դիտել մեր արուեստաւորների դրութիւնը հասկացած կ'լինեն նրանց չքաւորութեան ինչ աստիճան լինելը:

Մեր մէջ փոխադարձ օգնականութեան սկիզբը չ'կայ որ միմեանց օգնելու աշխատէին, չ'կան նոյնպէս փոխատու այնպիսի ընկերութիւններ ինչպէս Եւրոպայում, որի միջոցով թէ հասարակ արուեստաւորը և թէ գիւղացին—ձեռնտվութիւն կ'ստանային փոխառնելով աննշան տոկոսով փող, որը կ'ծառայէր նոցա շատ ու քիչ իւրեանց արուեստները յառաջ տանելու ջանք անել: Սակայն մեր մէջ արուեստները առաջ չ'գնալուն մի ուրիշ պատճառ էլ կայ, որը գրէթէ խորին կերպով տպաւորուած է մեր ժողովրդի կեանքի մէջ. հասարակ արուեստները—կօշկակարութիւնը դարբնութիւնը, ներկարարութիւնը, դերձակութիւնը, ատաղձագործութիւնը, ոսկերչութիւնը, դարբնութիւնը, ուրիշ հասարակ արուեստներ ամենայն ինչ ազգաբնակ ազգերի մէջ ազգերի մէջ ազգերի մէջ

րութիւնը, դաբաղութիւնը և ուրիշներ իւրեանց ճիւղերով 'ի բաց առեալ մի երկուսից (գինեգործութիւնից, շերամապահութիւնից որոնք քիչ շատ կատարելագործուած են որոնց և հետևողներ կան) միևնոյն դրութեան մէջ է մնացել այն պատճառով, որ մեր մէջ քիչ շատ դրամագլուխ ունեցող մասնաւոր անձ ոչ թէ միայն անպէտք բան է համարել այլ նաև նախատինք պարապել այդ արուեստի մէկով և կատարելագործել նրան իսկ խօսք չ'կայ որ հողագործութիւնը, անասնապահութիւնը, տնտեսական պաշարներ պատրաստելու գործը հարստին անմերձենալի է դառած, որովհետև ինչ յիմար բան է մեր մէջ հող վարձել, մշակել նորան, անասուն պահել, հօտեր ունենալ, սրանք միայն գիւղացիի և ոչ հարստի իմաց և մեծամըտութեան վայել բաներին.

Մեր վերև ասածներից պարզ երևում է որ երկրի զարգացման և յառաջադիմութեան նպաստող այդ արուեստները մնալով դրամագլուխ և նիւթական ապահովութիւն չունեցող դասի ձեռքը չի կարող բարւոքել և յառաջ տանել նրանց դէպի կատարելագործութիւն. և այս դրութիւնը կ'տանէ մեզ երկու բանի. նախ մեր արուեստները անփոփոխ մնալով անշարժութեան կենթարկուին և երկրորդ սպառեցնող թանկութիւնը վրայ կ'հասնի. և այն թանկութիւն մարդու առաջնակարգ պիտոյքների վերայ օրինակ հացի, մսի, իւղի և սրանց նման նիւթեղէնների որոնք ամենահարկաւոր են մեզ.

Մենք ցոյց տուինք առաջինի պատճառը ցոյց տանք և երկրորդինը:—Յայտնի է որ մի ապրանք որոշեալ արժէք (գին) չունի. արժէքը որոշվում է այդ ապրանքը արդիւնաբերելու համար դրած աշխատանքի և վատնած գումարի որոշեալ քանակութիւնով. արդ գիւղացին ծախում է իր արդիւնաբերածը ոչ թէ իր արդիւնաբերածի համար դրած աշխատութեան և վատնած փողի քանակութիւնով, որովհետև ասեցինք որ ահագին տոկոսներ տալուն և նեղութեան մէջ լինելուն պատճառաւ ստիպուածէ աժան գնով ծախել (և այստեղ շահվողը վաճառականն է) և կամ հակառակ դէպքի մէջ նա ստիպուած է իր արդիւնաբերածի գինը բարձրացնել մի կողմից իր պարտքը վճարելու և միւս կողմից իր ծախսերը փակելու համար. թէ այս և թէ այն դէպքի մէջ հետևութիւնը միևնոյն է, այն է գիւղացին ոչինչ չի շահվում, չի կարողանում գոյացնել մի փոքրիկ գումար իր կեանքի ապահովութեան համար:—Իսկ ցոյց տալու համար թէ ինչքան թանկ են այդ ամենահարկաւոր ուտելիքները ես յառաջ կ'բերեմ մեր Թիֆլիզի հրապարակի վրայ (մէյդանի) ծախուածների գները: Ալիւրը միջին հաշուով լաւը փութը 1—40-ից=1—60 կոպ. բրինձը 2—40-ից 2=60 կոպ, իւղը կարագը 40—50 կոպ. ֆնթուը, հալածը թուրքի, 30=40 կ. պանիրը 10=15—կոպ. միսը ոչխարին 10=15—կ. ֆնթուը, տավարինը 8=12—կ. հաւը 40=60—կոպ. հնդկահաւը 1=40 մինչև 2 մ. հատը, Սրանք օրական գներն են և կարծեմ չափազանցութիւն արած չեմ: Այս թանկութիւնը շատ զգալի է Թիֆլիզի մէջ Կովկասի կեդրոնում որը շրջապատուած է բնութեան ամենապատուական և բերրի հողերով. ասենք հարուստը կ'դիմանայ. բայց ինչ անի խեղճ արուեստաւորը, մշակը, ժողովրդի վարի դասը որ մեծ մեծ եկամուտներ չունի. դադածը օրը 50-ից մի մանէթ և սրանով պէտք է դուքանի տան քրէհ տայ իր սնունդը հոգայ և այլն: Ես չեմ կարծի և չեմ հաւատայ թէ այս գները իջնեն, ընդհակառակն աւելի և աւելի պիտի թանգանայ, որովհետև պիտոյքները, ծախսերը օրստ օրէ շատանում են և պիտի գնայ այսպէս շարունակաբար մինչև որ չ'գործադրվին միջոցներ վերցնել թանկութեան պատճառները:

Մեր այս դրութիւնը քանի գնայ պիտի ծանրանայ և մենք ամէն տարի իւրաքանչիւր փունթի համար 5. կ. 6. աւելացով պիտի ստիպուինք տանել. այս հասարակական խնդիր, առօրեայ հացի խնդիրն է. հարուստը իր հոգը չէ համարում այսպիսի երևոյթների դէմ ներգործելու հնարք բանեցնել նորա գրպանը լիքն է և երբ հարկաւոր կը լինի իրեն փութին 2 կամ 3 մ. տալով իրեն տունը կ'տանի բայց այս չէ խելացի մարդու գործը, մենք պէտք է մտածենք ընդհանուրի օգտի և բարեկեցութեան համար և որքան կարելի է իրագործել մի միջոց—եղանակ, որով կարելի լինէր օգնել գիւղացիին և արուեստաւորին վերցնել որքան հնար է նոցա չքաւորութիւնը և ջանք անել որ մեր երկրի մէջ արուեստները յառաջադիմութիւն և զարգացում կարողանային ստանալ:—

Ահա այս է և մեր դրութեան նպատակը այն է որ մի ընկերութիւն կազմուէր 50 հայ երիտասարդներից հետևեալ կերպիւ. իւրաքանչիւր ներս բերելով 100 մ. դրամագլուխ կազմուէր. 5000 մ. այս ընկերութեան նպատակը և ուղղութիւնը լինի ա), որքան կարելի է քիչ շահով $^0/_0$5 շահով փոխ տայ հողագործ գիւղացիին և կամ արուեստաւորին. բ). ընկերութիւնը կազմելուց յետոյ մի վաճառանոց հաստատել Թիֆլիսում առաջնակարգ նիւթեղէնների համար ցորենի կամ ալիւրի ամեն տեսակը բրինձի, իւղի և թուլնեղէնի (հաւ հնդկահաւ և այլն) և սրա ծախել ոչ թէ արժանի կրկնապատիկ կամ եռապատիկ գնով, այլ որքան կարելի է աժան ըստ տեսակին և առանց խարդախութեան. գ). ընկերութիւնը ընտրէ իր անդամներից նոցա որոնք հմուտ են և պարապած գիւղատնտեսականութիւնով մի մասնաժողով կազմելու որին և կ'յանձնուի գիւղա-տնտեսական դրութիւնը քննել մեր մէջ և երբ յարմար գտա է իր ծախքով զրկել գիւղերը մեր ժողովրդի տնտեսականութեան և կամ հողագործութեան մէջ եղած պակասութիւնները հետազօտել, երկրի բնութեան հետ ծանօթանալ և ընկերութեան հաղորդել: ընկերութիւնը հոգայ որ նա և գիւղերի մէջ ընկերութեան մի ճիւղ կազմելու, որը յարաբերութիւն ունենայ ընկերութեան հետ. ե). ընկերութիւնը երբ հարկաւոր անդամի հասնի իր պրոգրամման ներկայացնէ կառավարութեան հաստատելու համար. զ). հարկաւ ընկերութիւնը կունենայ իրանցից մի երկու գործակալներ գլխաւոր գիւղերի մէջ այդ առաջնակարգ նիւթերը առնելու և այստեղ մարդիկ չափաւորաճկով վաճառելու համար և ամեն զգուշութիւն գործ դնելով որ ընկերութեանը չ'խարգախեն: Ահա սրանք կ'լինէին, իմ կարծիքով, այն գլխաւոր կէտերը, որով պիտի կազմուէր ընկերութիւնը և որը, գոյութիւն առնելուց յետոյ ձեռք կառնէր շինել և հաստատել իր գործողութեան պրոգրամման:

Հիմայ ուշադիր ընթերցողը պիտի հարցնէ թէ այդպիսի մի ընկերութիւն որ 5$^0/_0$ շահով պիտի տար փող և բերած նիւթեղէնները որքան կարելի է աժան կերպով պիտի թողնէ հապա ընկերութեան օգուտը որտեղից պիտի լինի. այս հարցին պատասխանում եմ որ տոկոսը չնչին բան պիտի լինի ընկերութեանը համար. իսկ ընկերութիւնը որքան կարելի է աժան կերպով թողնելով վաճառելի ապրանքները այդ չի նշանակում թէ նա զուրկ պիտի լինէր շահից այլ ընդհակառակը կստանա և օգուտ, որովհետև անմիջապէս գիւղացից առնելով նիւթերը և ձեռք է ձեռք չընկնելով կարող է աժան ծախել և իր օգուտն էլ ստանալ. իսկ եթէ հարցնուի թէ 5,000 կամ 10,000 ով չի կարելի իրագործել այն բաները որոնք պիտի մտադրվի անել ընկերութիւնը. այս հարցին էլ պատասխան է, թէ իրօք հինգ հազարը կամ տասն հազարը քիչ է այդպիսի նպատակի համար, սակայն ընկերութիւնը առաջուց կը սկէ փոքրով գործ տեսնել. բայց նաև կայ գումարը չնչին բան չ'պէտք է համարել, դա ամահու զարկ պիտի լինի հարուստներին և կազատէ հասարակ գիւղացիի և արուեստաւորինը հարստահարող ձեռքերից. այդ ստեղծուած դրամագլուխը կ'լինի միակ միջոցը ժողովրդի մէջ անկախ ինքնուրոյն գործունէութիւն առաջացնելու իր արուեստները հետզհետէ կատարելագործելուն որին և պիտի նպաստէ ընկերութիւնը:

Մեր մէջ մի տեղ չենք տեսնում մի հասարակական ընկերութեան կազմութիւն և այս ցաւալի իրողութիւն է մեր մէջ. իւրաքանչիւր մարդ իրեն համար է գրեթէ ապրում և այդ պատճառաւ մեզանում ընկերական ոգի չ'կայ միաւորիչ կապ դասերի մէջ. սրա համար զարմանալի չէ որ մեր յայտնած գաղափարը սառն արհամարհութեան հանդիպի, բայց մենք, ինչպէս ասեցինք, հարուստը իր հոգը չէ համարում և թերևս իր ուշադրութեան և ոչ խօսելու անգամ արժանի համարէ. բայց մեր խօսքը ոչ թէ հարստին է ուղղուած. այլ այն երիտասարդներին, որոնք զգում են մեր ժողովրդի ցաւալի դրութիւնը և այն դասին, որը տանում է նեղութեան և չքաւորութեան բեռը, որը իրան ճնշելու է սպառնում: Մենք յուսունիմք որ մեր այս խօսքերը «ձայն բարբառոյ յանապատի» չեն լինել և կ'խմբուին մարմնաւորել այսպիսի մի նպատակ, որը ընդհանուրի օգտի և լաւութեանը պիտի ծառայէ:

Մի Թիֆլիզեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներսիսեան հոգևոր դպրոցի կանօնադրութեան 11-որդ յօդվածի զօրութեամբ, հոգաբարձուները 4 տարով են ընտրվում: Այժմեան հոգաբարձուները 1868 թուին ընտրվեցան: Ներկայ տարու մայիսից պիտի սկսվէր արդէն նոր հոգաբարձուների ընտրութիւնը... Ինչ է պատճառը որ մինչև այժմ ընտրութիւնների հօտն էլ չըկայ:—Ուր է կանօնադրութեան 11-որդ յօդվածը:

—

„Бирж. Вѣд.“ լրագիրը խօսելով այն երիտասարդի մասին, որ Պէնզա քաղաքի գիմնազիօնում իրան սպանել է, աւելացնում է „ինչի պատահում են մեզ մօտ այդպիսի դէպքերը: Ճշմարտութիւնը այն է, որ մենք զգուշութեամբ չենք ընտրում մանկավարժական պաշտօններ վարող անձերին: Բաւական չէ ուսումնական կրթութիւնը բայց հարկաւոր է բարոյական դաստիարակութիւնը և հոգևոր ընդունակութեան ուղիղ զարգացումը, այդպիսի պաշտօնները վարելու համար:

—

Ուրբաթ, մայիսի 19-ին Թիֆլիսի հայ-դերասանական խումբը ներկայացրեց ամառային թատրոնում, մեր ազգային հեղինակի պ. Գ. Սունդուկեանցի „Խաթաբալա“ ժողովրդական պիեսան: Մենք հաւանում ենք այդպիսի պիեսաների ներկայացումն, և համոզված ենք, որ անհամեմատ մեծ կրթողական, ազդեցութիւն ունին, քան թէ թարգմանական ընմական գրվածները: Եթէ պակասութիւնները անգամ պատահէին այդ տեսակ պիեսաների մէջ, դարձեալ նոքա ապարդիւն չէն մնայ մեզ համար, որովհետև ամեն մարդիկների մէջ (չեմ խօսում մասնել ընդունակութիւն չունեցողների վերա) պիտի յարուցանեն միտք, ուրեմն խնդիրներ և նոցա վերաբերութեամբ վիճաբանութիւնները: Եւ մենք էլ կաշխատենք „Խաթաբալա“ պիէսայի մասին քննադատութեան փորձը առաջարկել գալու համարում:

—

Ռուս Օրէլ քաղաքում մի երիտասարդ պ. Սօլով մի գիւտ է արել: Նա գտել է էլի մի յարմար միջոց նաֆթից գազ չինելու լապտերների մէջ գործածելու համար: Մի և նոյն երիտասարդը աշխատում է յարմարեցնել շոգենաւներին և շոգեկառքերին նաֆթի գազը ուրիշ մինչև այժմ գործըդրած վառելիքի տեղը:

—

իվան Բաբայեվը, որ իրան իշխան Գօգչայսկին էր անուանում, և որը զանազան յանցանքները գործեց ինչպէս սուտ անցաթուղթ գրելը, կեղծեալ անունով ապրելը, խաբեբայութեամբ զանազան անձերից փողերը ձեռք գցելը, սուտ փոխանակագրեր գրելը, և այլն,—մայիսի 6-ին Ս. Պետերբուրգի օկրուժնօյ սուդի վճռով դատապարտվեցաւ իր բոլոր քաղաքական իրաւունքներից զրկվելու, և Սիբիրիայի մէջ կեցութեանը ուղարկվելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ:

Նապոլէօն III-ի մինիստրները իրանց ազնուութեամբ նշանաւոր չէին: Երբ, օրինակ, վերջին պատերազմից առաջ զինուորական նախարար պ. Լէբէֆից հարցրին, արդեօք պատրաստ է զօրքը և ունի պատերազմին հարկաւոր ամէն միջոցները,—նա յանդուգն պատասխանեց „այո, պատերազմի բոլոր ընթացքի ժամանակ հարկաւոր չի լինի մի կոճակ անգամ առնելու:“ Բայց պատերազմը սկսվեց և յայտնվեց որ ֆրանսիական զօրքին շատ անգամ պակաս էր վառօդ և ուրիշ նիւթեղէններ. . .

Լէբէֆի տեղը կոմս-Պալիկաօն բռնեց: Բայց անձերը փոխելով չը փոխեցին կարգ ու կանօնը: Պալիկաօն պէտք է պատրաստ էր զէնքեր և պաշար,—և այստեղ նապոլէօնական Ֆրանսիայի պաշտօնեաները կատարելապէս յայտնվեցան: Հարկաւոր էին հրացաններ,—անգլիական և ամերիկական գործարանները առաջարկում էին հրացանները յայտնի գներով: Բայց երևում է յանկարծ մի որ և է կապալառու (փոդրադչիկ) կաշառք է տալիս պաշտօնեաներին և ստանում է կապալը աւելի բարձր գնով: Հարկաւոր են փամփուշտներ (պատրօնի),—դարձեալ կրկնվում է միևնոյնը: Անգլիացիները առաջարկում են հարիւրը 80 ֆրանկով, իսկ նախարարութիւնը իր մարդիկներին տալիս է կապալը 180 ֆրանկով հարիւրը:

Պատերազմը վերջացաւ: Նապոլէօնը ընկաւ, նորա տեղը բռնեց Տիէրը իր մինիստրներով: Բայց Նապոլէօնի կառավարութեան ձևը մնաց: Միևնոյն կառավարչութիւնը, միևնոյն պաշտօնեաները, միևնոյն կաշառք, գումարների միևնոյն անհաշիւ մսխելը: Նորերումս դատաստանի կանչած էր մի դաւառապետ (պրէֆեկտ), Ժանվիէ-դը-Լամօտ, անունով որը մեղադրվում էր թէ կերել էր տէրութեան փողերը, որոնց նա իր սիրեկանների համար էր գործածում: Նախարարներից մինը Պույէ-Կէրտիէ սկսեց պաշտպանել մեղադրվածին դատաստանի ժամանակ, ասելով որ պրէֆեկտը մեղաւոր չէ որ կանօնաւոր հաշւատեսութեան մատեաններ ունէր, որ դաւառապետները շատ անգամ այնպիսի ծախսեր ունին, որոնց անհնարին է որ և է մատեանի մէջ նշանակել:

Ճշմարիտ է, որ մինիստրը յետոյ հրաժարեցրած է եղել, բայց այնու ամենայնիւ նորա ասած խօսքերը նշանաւոր են, և ցոյց են տալիս, որ պ. Ժանվիէ-դը-Լամօտի անցքը եղակի դէպք չէր Ֆրանսիայի կառավարչական սիստեմայի մէջ:

Բայց չը նայելով, որ բոլոր ֆրանսիական կառավարութիւնը ծնչւորված է այդ ոգով, ազգային ժողովի կուսակցութիւնները ամեն դէպքից առիթ են քաղում իրանց հակառակորդներին ամչնրութեան և գողութեան մէջ մեղադրելու...:

Նորերումս պ. Օդիֆրէ-Պակիէ, (Օրլէանիստների կուսակից) որ անդամ է այն մասնաժողովի, որ պիտի քննէ պատերազմի ժամանակ կապված կապալները,—սկսեց հրապարակապէս մեղադրել նապոլէօնական մինիստրների քանի մի անունիւ, անվայել գործերը, և նոցա կառավարութեան քանի մի թերութիւնները, որոնց նա կամ նոցա էր վերաբերում կամ իրանց ստորադրեալներին: Այն ժամանակ Նապոլէօնի հին կուսակիցներից մինը պ. Ռուէ, պահանջեց, որ դատաստանական քննութիւն նըշանակվի և ի Գամբէտտայի կառավարութեան մինիստրների վերա, որովհետև այն ժամանակին էլ կապվեցան քանի մի կապալները որոնցից վնաս կրեց տէրութիւնը.—

Սորան Գամբէտտան պատասխանեց. „Մենք կաշխատենք ներկայ գտնվել քննութեան ժամանակ: Ազնիւ և պատուական մարդիկների մէջ չէ կարող անհամաձայնութիւն ծագել: Եթէ կը յայտնվին յանցանքներ, գողութիւն և կաշառք, — մենք . ինարկէ չենք ընդդիմանայ մեղաւորներին արդար պատիժ նշանակելու համար, որքան և բարձր պաշտօն վարէին այն անձերը“:

Գամբէտտան այնքան անկեղծ էր խօսում, որ հակառակորդներն անգամ չը կարողացան հակասել նորան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարոն խմբագիր

Ձեր պատուական լրագրոյն մէն անկիւնի մէջ եթէ հարկ կը համարէք, տեղի շնորհէք Հասունեան խնդրոյն վերաբերութեամբ Տրապիզոնէն այս օրուան փոստայէն առած լուրերս։

(Հեռագրալուր) մայս 4 էն Երկուշաբթի, օրը Պոլիսէն Տրապիզոն զարկված։

Այսօր ի Ներկայութեան եպիսկոպոսաց, քահանայից, ազգային բազմաթիւ ժողովրդեան, իբրև 500 անձանցմէ բաղկացեալ արքունեաց սրահին մէջ պատրիարքութենէ մերժված Հասունեանի տեղը Նոր պատրիարգ ընտրվելուն՝ բարձրագոյն Հրամանագրին պատճէնն այս է։

Ասկէ երեք տարի առաջ Հռոմին մէջ Հրատարակված Րէվերսուրուս անուամբ կոնդակն որ կը դիպչեր ուղղակի տէրութեան ներքին գործոց կառավարութեանը և Հայկաթօլիկ ժողովրդեան արտօնութեանցը և իրաւանցը բոլորովին Հակառա՛ և որովհետև տէրութիւնը քննելով գտաւ Հասունին Համախոհ յիշեալ կոնդակին, արդէն ինքը և իր Համախոհները կը զրկէ պատրիարքութեան ընտրելեաց ցուցակէն և կը Հրամայէ անոր տեղը ընտրել տէրութեան Հպատակ Հայ կաթօլիկ ազգէն ընտիր և Համեարեղ անձը ժողովրդեան Համաձայնութեամբը, և ներկայացնեն բարձրագոյն դռանը Հաստատելու Համար։

(Հեռագրալուր) Մայսի 9-ից Պոլսից Տրապիզոն զարկված Թելը։

Բարձրագոյն դուռը Հասունիստ Թելքիեանին ընտրութիւնը մերժեց։ Այս օր Պէյլէրճեյին նախագահութեամբը, Ղալաթա սրահին մէջ Կիլիկ'ոյ կաթուղիկոսարանի միաբան տէր-Օհան Արհի-եպիսկոպոսը պատրիարգ ընտրեցինք։

(Հեռագրալուր) մայիս 13-էն Պոլիսէն Տրապիզոն զարկված Թելը։

Այսօր մեր-նորընտիր պատրիարգ տէր-Օհանը վեհափառ կայսեր (Սուլթանին) ներկայացաւ, որունմէնէ ընդունվեցաւ մեծաւ յարգանօք իբրև պատրիարգ Հայոց կաթօլիկաց։ Անկից գնաց բարձրագոյն դուռը և Հոն ալ, անթիւ բազմութեանը ներկայութեանը, պաշտօնական կերպիւ, Հրատարակվեցաւ պատրիարգ Հայոց կաթօլիկաց։

— Ապրիլի 7-ին Պրուսիայում Հրատարակվեցաւ մի Հրովարտակ, որի զօրութեամբ բոլոր եզուիտները, որոնք Պրուսիայի և Գերմանիայի Հպատակները չեն, պիտի Թողնեն Գերմանիայի սահմանները։

— Կ. Պոլսից հաղորդումեն, Զմիւռնիայում Հրէաները ենթարկվեցան սաստիկ հալածանքներին յոյների կողմից։ Ցոյն յանցաւորներին պղտեղ բերեցին։ Այս առիթով Սուլթանը ասել է. „իմ՝ պետութեան մէջ չը կան ոչ Հրէաներ, ոչ քրիստոնեաները, ոչ մահմետականները, այլ կան հաւասար իրաւունքները վայելող քաղաքացիներ։

— Շվէյցարիայում նոր սահմանադրութիւնը քուէարկվեցաւ կանտոնների մէջ և կանտոնների բազմութեամբ (11 և 2 կէս կանտոն 8 և կէս կանտոնի դէմ) մերժվեցաւ։

— „Le temps" լրագիրը հաղորդումէ որ այժմ Իտալիայում պարապված են պարտաւորիչ ուսման խնդրով։ Իտալիայի օրէնքով ծնողները պարտաւոր են պահել, դաստիարակել և ուսում տալ իրանց երեխաներին։ Նորերումս պ. Կօրէնտի առաջարկեց յետագայ նոր օրէնքը. այն երեխաները որոնք ուսում չեն ստանում իրանց ծնողներից պարտաւոր են ուսումնարան յաճախել, 6 տարեկան հասակից սկսած։ Ծնողները որոնք ընդիմութիւն են անում, պատժվումեն տուգանքով, 2 ֆրանկից մինչև 7 ֆրանկ։ Ուսում աւարտելու ժամանակամիջոց ճշդութեամբ նշանակված չէ բայց մօտաւորապէս ասված է 11 տարեկան հասակը, այն ինչ ուրիշ եւրոպական երկիրներում ժամանակամիջոցը նշանակված է 12—13 տարեկան հասակը։

— Պետերբուրգի „Journal de st Petersbourg" ասումէ որ Ֆրանսիայում կամենումեն նոր բժշկական բաժինը բաց անել Բօրդօ քաղաքում,

— Ֆրանսիական „Siécle" լրագիրը ասումէ որ պ. Ժիւլ Սիմօն օգնում է քաղում տէրութեան այդ դիտաւորութիւնից որ առաջարկի բոլոր Ֆրանսիայում բժշկական մասի կատարեալ վերանորոգութիւն։ Նախարարը կամենումէ մի բժշկական ֆակուլտէտը նմանապէս Լիօնում և ուրիշ Նանսի քաղաքների մէջ հիմնել։ Այդ վերջինը պիտի կազմակերպվի գերմանական ֆակուլտէտների համեմատ։

— Ֆրանս. „La Sarthe" լրագրի մէջ կարդում ենք, որ կարլիստների մեծ բազմութիւնը Ֆրանսիայի սահմանները անցնումէ։ Նոցանից մեծ մասը բոլորովին երիտասարդ մարդիկ են։

— Գերմ. „Allgemeine Zeitung" լրագրում կարդումենք որ Բէրլինի պատգամաւորների ժողովի մէջ (Րէյխստագ) շարունակվումէ եզուիտների վերաբերութեամբ վիճաբանութիւնները։ Պատգամաւոր պ. Կիֆէր (Kiefer) իր ճառի մէջ ասել է որ եզուիտների միաբանութիւն սպառնումէ կրթութեան և ազատութեան զարգացմանը Եւրոպայում։ Նոցա գլխաւոր ոյժը որով նոքա մեծերին ժողովրդից կրաւորական ամբոխ են շինում պարունակվումէ հնազանդութեան և դիսցիպլինայի մէջ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Մասիս" լրագիրը ասումէ „կը լսենք թէ կաթօլիկ հայոց երկպառակութիւնն այս առաւօտ Բերայի Ռսկերեան եկեղեցին գումարվելով, պատրիարքական ընտրութեան ձեռնարկած, և Տիգրանակերտցի գեր. Քիւրելեան Յօհան եպիսկոպոսը քուէից բացարձակ առաւելութեամբ Պատրիարգ ընտրածէ"։

* * *

„Մասիսի" մէջ կարդումենք և հետևեալը. „Քանի տարիէ ի վեր Ռուսիայէն Կ. Պոլիս եկած և հոս բնակեալ Պետրոս պէյ Մատաթեանց հայ զինուորականը որ Սէֆեադ մականունը կը կրէր և իր հայրենիքը սիրական տաղերօվն հայ բանասիրաց ծանօթ էր, երկար հիւանդութենէ մետև երկուշաբթի օրը վախճանեցաւ ի հասակի 62 ամաց։ Երեքշաբթի օրը Մայր եկեղեցւոյ մէջ յուղարկաւորութեան արարողութիւնը կատարվելով, Ս. Պատրիարք հայրը սրտառուչ դամբանական մի խօսեցաւ հանգուցելոյն վերայ, և նորա գրած ընտիր տաղերէն մի քանին կարդալով, նորա հայրենասիրական խանդն և զգացմանց փափկութիւնը գովեց։

* * *

Փարիզում հրատարակվեցաւ „La statistique de Paris en 1870 Փարիզի վիճակագրութիւն 1870 Թւին)։ Նոյեմբերի 1-ից 1869 Թւի, մինչև Նոյեմբերի 1-ը 1870 ծնունդների Թիւը հասաւ մինչև 57, 112. այս Թւում 41,684 հարազատ երեխաներ են, իսկ 15,428 անհարազատ։

Այդ վերջինների Թւում միայն 3,538 ճանաչված են եղել իրանց ծնողներից, իսկ 11,880 ահագին Թիւը ճանաչված չէ եղել։ Օրվայ ծնունդների միջին Թիւը 146 է։

* * *

Բէրլինից գրումեն որ մայիսի 6-ին կատարվեցաւ այդ տեղ Հրէական բարձր ուսումնարանի բացման հանդեսը։

* * *

Մենք լսումենք որ երկաթուղու գիծը Փօթի—Թիֆլիս շուտով պատրաստ կլինի։ Շոգեկառքերը երեցցան Թիֆլիզից 10 վերստ հեռու։

* * *

Հարաւային ժողովուրդը միշտ սիրումէ երգ և երաժշտութիւն։ Մեր կօնցերտների ժամանակ մենք շատ անգամ ուրախութեամբ լսեցինք պ. Կարապետեանի երգեցողութիւնը։ Բայց դժբաղդաբար նա մինչև այժմ միշտ մի և նոյն երգեր էր երգում, „ինձ համար չէ" և „ծիծեռնակ։

Այժմ պ. Կարապետեանը հասկացաւ որ բաւականանալ մեկ երկուերգով անկարելիէ և աշխատումէ այդ տարի ընդարձակել իր րէպէրտուարը և մի քանի նոր երգերը ժողովրդին առաջարկել։ „Խաթարալա" պիեսայի ներկայացման օրը նա երգեց անտրակտներում „ասէք նորան" նոր երգը, որը մեզ վերա շատ լաւ տպաւորութիւն արաւ։

* * *

Խմբագրութիւնը խորին շնորհակալութեամբ ստացաւ Ս. Էջմիածնից Գէորգ աբեղա Սուրէնեանցի աշխատասիրած „Դասագիրք ընդհանուր պատմութեան. Ա. հատոր—պատ. հին դարուց։ Սա մի Թարգմանութիւն է ռուս Իլովայսկի պատմական գրքից, բայց հարստացրած մեր ազգային պատմութենից առնված ժամանակակից նշանաւոր անցքերով։

* * *

Ահա մի օրինակ Եւրոպայի մեծ կենդրոնների, խորին չքաւորութեան։ Վիէննայում կազմվեցաւ մի մասնաժողով որի պաշտօնն է քննել տները և բնակարանները նոցա առողջութեանը յարմար պայմանների կողմից։ Քաղաքի մի տան մէջ այդ մասնաժողով գտաւ մի ստորերկրեայ սենեակ որը 24 քայլ երկարութիւն և 4 քայլ լայնութիւն ունէր և որտեղ ապրումեն 48 մարդ, որոնցից 7 կանայք 2 մի երեխայ։ Ոչ լոյս ոչ օդ կայ բնակարանի մէջ բայց դարձեալ խեղճ բնակիչները իրանց տանտիրոջը վճարումեն 60 կրէյցեր (մօտ 60 կօպէկ) մարդագլուխ. այնպէս որ անխիղճ տէրը դարձեալ տարեկան 1440 ֆլօրին է ստանում իր այդ սարդափի վարձ. . . ։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ։

ԱԽԼՑԽԱՅ։ — Ազգ. Հոգ. Դպ.—Ձեր յօդուածը խմբագրութիւնից անկախ պատճառով չէ կարող տպվել։

ՋԱՎԱԽԱԼ։ — Ա. Մաղ—Эмиль XIX-го вѣка Թարգմանութիւնը ստացանք։ Խորհուրդ ենք տալիս շարունակել։

ԲԱԳՈՒ։ — Օր. Կատ. Եաղ.—Ձեր գեղեցիկ յօդուածը կանանց մասին ստացանք։ Սպասումենք նորա շարունակութեանը որ կարողանանք վճռողական պատասխան տալ տպվելու մասին։

ԹԻՖԼԻԶԻ ՓՈՍՏԸ։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ։	Ռուսաստան, Արտասահման, Քութայիս, Դարբանդ և Երևանի գաւառը։
ԵՐԵՔՇԱԲԹԻ.	Բագու, Գանջա, Շուշի, Շամախի։
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ.	Քութայիս, Ռուսաստան, Արտասահման, Երևան, Ախալցխա Դարբանդ։
ՀԻՆԳՇԱԲԹԻ.	Ռուսաստան, Արտասահման։
ՈՒՐԲԱԹ.	Քութայիս, Երևան, Ախալցխա Ջալաթալ, Նուխի։
ՇԱԲԱԹ	Բագու, Ռուսաստան, Արտասահման, Դարբանդ, Գանջա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(մայիսի 25-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպէրիալ)	6 ռ.	7½ կ.
ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ (բարաթ) Պօլ. վճարելիք (Լիրա Օսմանեան) .	6 „	75 „
ԲԱՄԲԱԿԸ Երևանու	5 „	20 „
„ Ամերիկայի սերմից .	7 „	— —
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի անքօք	12 „	— —
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրօդկու)	9 „	45 „
„ „ միւս տեսակը . .	9 „	20 „
„ զազրանից տրանցից.	5 „	75 „
մաքուր վճարած	8 „	80 „
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռսի	8 „	50 „
ԲՈՒՐԴԸ Թուշի	9 „	50 „
„ Թարեքեամի	7 „	50 „
ԴԱՀՎԱ Լիմանի լաւը	13 „	50 „
„ Մարտինիկայի, ցածրը .	12 „	— —
„ Մօկօ, շատ լաւը . . .	14 „	50 „
ԴՊԵՂԸ	11 „	50 „
ԵՐԿԱԹ	2 „	20 „
մինչև	3 „	50 „
ՄՈՄ	12 „	— —

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։
(մայիսի 20-ին)

ԼՈՆԴՈՆ.—մի ռուբլի աժէ 32 5/16 պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի աժէ 347¼ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ 153½

Երկրորդ 151

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կօջօրում ծախվումեն ամառնային տներ (դաչի) երկուսը միասին և առանձին, անտառով և ջրով. Նոցա տակ գտնված հողի տարածութիւնը հաւասարէ 4470 կվադրատնի սաժէնի. Գնի մասին հարցնել տ. Մարտինօվային իր սեփական տանը, հին Մօսկօվսկաեայ զաստավաի մօտ։

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

Մեծ. պ. Վասիլ Խօջայեանցի „ճանապարհորդութիւն Վէզուվ հրաբուղխ սարի վերա" Սա մի հետաքրքիր ճանապարհորդութիւն է Իտալիայի մէջ։—Ծախվում է յօդուած Ս. Մարիամեան ծխական ուսումնարանի։ Ցանկացողները թող դիմեն „Մշակի" խմբագրութեանը։

Leçons de tenue des livres en parties doubles (pour le commerce, fabriques, banques etc) et d'arithmétique du commerce en langues française, armeniénne, anglaise et russe.

Le cours ne dure pas plus de six mois.

S'adresser á M. Khatchatourian, Rue du Laboratoir, maison Psaroff en face le jardin de son Altesse Imperiale.

АДВОКАТЪ

АЛЕКСАНДРЪ ЯКИМОВИЧЪ ШАХЪ-АЗИЗОВЪ-КАМСАРАКАНЪ принимаетъ на себя ежедневно публичную защиту по дѣламъ гражданскимъ и уголовнымъ; составляетъ апелляціи, кассаціи и даетъ совѣты по судебнымъ дѣламъ

Иногородные, желающіе поручить ему дѣла, присылаютъ выписку изъ документовъ. О принятіи, или не принятіи они будутъ извѣщаемы съ первою почтою, или по телеграфу, на ихъ счетъ.

За веденіе гражданскихъ дѣлъ беретъ вознагражденіе на основаніи Высочайше утвержденной таксы, а за защиту по дѣламъ уголовнымъ—по особымъ соглашеніямъ съ кліентами.

Условнсе возноιражденіе за труды по веденію дѣлъ вѣрители уплачиваютъ ему по выигрышѣ дѣла.

Въ случаѣ проигрыша принятаго имъ дѣла онъ принимаетъ на себя платежъ вѣрителю своему судебныхъ издержекъ.

Контора помѣщается возлѣ Армянскаго Ванкскаго Собора, рядомъ съ Телеграфною Станціею, по Малой Водовозной улицѣ, въ собст. домѣ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 25 Мая, 1872 г. Տէրէթէլի և ընկ. (նախկին Գուբէնլիի տպարան) Խմբագիր—Հրատարակող Գրիգոր Արծրունի։